ՀՊՏՀ ռեկտոր, դոկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի ելույթը ՄԱԿ-ի «Կայուն տնտեսական զարգացման մոդել Հայաստանի Հանրապետության համար» միջոցառմանը

Հարգելի հյուրեր, գործընկերներ, ուսանողներ

Ողջունում եմ ձեզ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում և ցանկանում նախ և առաջ շնորհավորել մեր գործընկերներին՝ ՄԱԿ-ի օրվա առթիվ, որը նշվում է յուրաքանչյուր տարվա հոկտեմբերի 24-ին:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի և Միացյալ ազգերի կազմակերպության հանրային տեղեկատվության վարչության համագործակցությունն արդեն մի քանի տարվա պատմություն ունի. 2013թ. կնքված համագործակցության պայմանագրի շրջանակներում մենք մինչ օրս բազմաթիվ համատեղ միջոցառումներ ենք կազմակերպել, որոնց թվում՝ ՄԱԿ-ի մոդել խորհրդաժողովներ, մեր համալսարանի ուսանողների մասնակցություն ՄԱԿ-ի կամավորական աշխատանքներին, գրականության նվիրատվություն մեր գրադարանում տեղակայված ՄԱԿ-ի անկյանը:

Այսօր նույնպես հավաքվել ենք ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության հետ համատեղ կազմակերպված միջոցառման շրջանակներում քննարկելու ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների իրագործմանն ուղղված խնդիրներն ու ռազմավարական լուծումները Հայաստանում:

Ինչպես հայտնի է, ՄԱԿ-ը սահմանել է մեծ կարևորություն ունեցող, միևնույն ժամանակ բավական հավակնոտ նպատակներ, որոնք առանցքային նշանակություն ունեն ցանկացած երկրի կայուն զարգացման

և ամբողջ աշխարհում դրա համաչափության ապահովման համատեքստում: Այդ նպատակները, որոնք պետք է իրագործված լինեն 2030 թվականին, առնչվում են յուրաքանչյոր երկրի կենսագործունեության բոլոր ասպեկտներին և ներառում են սոցիալական, տնտեսական, բնապահպանական, առողջապահական ու այլ բնագավառներ: Սրանք միաժամանակ նպատակներ են, որոնց լուծումը, կարծում եմ, պահանջում է որոշակի առաջնահերթություններ՝ միևնույն ժամանակ չխախտելով դրանց համալիրության սկզբունքը:

Սակայն մեզ համար, իբրև Հայաստանի Հանրապետության առաջատար տնտեսագիտական համալսարանի, առավելապես հետաքրքրում են ՄԱԿ-ի կողմից սահմանված տնտեսագիտական ուղղվածության նպատակները և դրանց իրագործման հնարավոր ուղիների որոնումը: Կարծում եմ, ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ կայուն զարգացման նպատակների իրագործումը մեծապես կախված է հենց երկրների տնտեսական զարգացումից, տնտեսական իրավիճակի, միջավայրի, ենթակառուցվածքների բարելավումից և շուկայական տնտեսության ինստիտուտների արդյունավետ զարգացումից: Հենց այս խնդիրների արդյունավետ լուծման մեջ էլ թաքնված է մնացյալ նպատակների իրագործման համար ներուժի և հնարավորությունների կուտակման բանալին: Այս առումով, կարծում ենք, իսկապես կարևոր է բոլոր երկրներում էլ հավասարապես կայացած, ներառական և կայուն տնտեսական աճի խթանումը, լիարժեք, արտադրողական զբաղվածության և բոլորի համար արժանապատիվ աշխատանքի ապահովումը, դիմակայուն ենթակառուցվածքների ձևավորումը, ներառական և կայուն արդյունաբերության զարգացման աջակցումը, սպառման և արտադրության կայուն մոդելների ապահովումն ու նորարարության խթանումը:

Միևնույն ժամանակ այս նպատակների իրագործման համաչափությունների պահպանումը բոլոր երկրների համար էլ բավական բարդ խնդիր է, քանի որ դրանցից յուրաքանչյուրն առանձնահատուկ է տնտեսության զարգացման մակարդակով, սոցիալ-ժողովրդագրական միջավայրում ընթացող գործընթացներով, համաշխարհային

տնտեսությունում ունեցած իր դիրքով, իրեն ներհատուկ խնդիրներով, ինչպես նաև դրանք լուծելու մեկնարկային ներուժով: Այդ առումով գտնում եմ, որ յուրաքանչյուր երկիր, ելնելով իր մեկնարկային ներուժից և այս խնդիրների լուծման հաջողված միջազգային փորձի տեղայնացման հնարավորություններից՝ ինքը պետք է կարողանա ընտրել համաշխարհային տնտեսությունում իր արդյունավետ դիրքավորման և առաջընթացի ուղին: Այս առումով միջազգային հաջողված փորձը հուշում է, որ զարգացման ցածր մակարդակից բարձրանալու, բնակչության լայն զանգվածներին արժեքի ստեղծման շղթայում ներառելու, սոցիալական խնդիրներ լուծելու և անհատի մոտ հենց իր երկրի նկատմամբ վստահությունն ավելացնելու առավել արդյունավետ ուղիները ներքին սպառման խթանմամբ տնտեսական աճի ապահովման մոդելներն են, որոնց մեջ առավել մեծ արդյունք գրանցած ուղղությունները արդյունաբերական գյուղատնտեսության և շինարարության ճյուղի խթանումն են: Հատկապես շինարարությունը, որը բազմաթիվ հեղինակավոր հետազոտողների կողմից համարվում է հետպատերազմյան եվրոպայի այդչափ արագ վերականգնման և տնտեսական զարգացման առումով մրցակիցներից առաջ ընկնելու ճանապարհը: Սա կապված է նրա հետ, որ շինարարությունը արժեքի ստեղծման ամենաերկար շղթան ունեցող ճյուղն է ազգային տնտեսություններում, որն ապահովում է նաև ամենամեծ մուլտիպլիկատիվ և սիներգիկ էֆեկտը տնտեսության մեջ՝ հանդիսանալով համակարգաստեղծ ոլորտ: Այն իրենով «աշխատեցնում է» տնտեսության գրեթե բոլոր ճյուղերը, ներառելով տնտեսական գործունեության մի քանի տասնյակ ոլորտներ, քանի որ շինարարությունը և մասնավորապես բնակարանաշինությունը առաջացնում է 1100-ից ավելի արտադրատեսակների պահանջ, ինչի մեծ մասը կարելի է ապահովել ներքին արտադրության հաշվին: Այս առումով շինարարությունը լոկոմոտիվի դեր է ստանձնում տնտեսության մյուս ճյուղերի համար: Շինարարությունն այն եզակի ճյուղերից մեկն է նաև, որը, ինչպես ցույց է տալիս հաջողված միջազգային փորձը, հնարավորություն է ընձեռում երկրներին գործարկելու երաշխավորված ներքին պահանջարկի վրա հիմնված, այսպես ասած փակ ցիկլով աճի մոդել, որն այդքան մեծ չափով

կախված չի լինի արտաքին աշխարհի ցնցումներից: Փաստացի շինարարությունն այն եզակի ճյուղերից է նաև, որով հնարավոր է դառնում ուղղակի ու անուղղակի ներգործությամբ լուծելու գործազրկության կրճատման խնդիրը, քանի որ այն առաջացնում է աշխատուժի ներգրավման մեծ պահանջարկ ինչպես բուն ճյուղում, այնպես էլ իրեն անմիջականորեն փոխկապված և սպասարկող ճյուղերում: Մյուս կողմից, բնակչության եկամուտների և սպառման ազդեցությունը մեծապես ներդրում են ունենում նաև տնտեսության այլ ճյուղերում ու հատկապես ծառայությունների ոլորտում՝ նպաստելով եկամուտների ու զբաղվածության ավելացմանը:

Մյուս կարևոր ուղղությունը արդյունաբերական գյուղատնտեսության խթանումն է: Կարևոր եմ համարում շեշտել, որ խոսքն այստեղ վերաբերում է ներքին ու արտաքին շուկաներում մրցունակ, բրենդավորված գյուղմթերքի և պարենային ապրանքների թողարկմանը և այն մատակարարելու լոգիստիկ ենթակառուցվածքների ձևավորմանը: Սա ենթադրում է խորը կապերի ձևավորում գյուղատնտեսության, մշակող արդյունաբերության, լոգիստիկ ենթակառուցվածքների, ինչպես նաև ֆինանսական հատվածի միջև (ներառելով ինչպես վարկավորման, այնպես էլ ապահովագրության գործընթացները): Մյուս կողմից արդյունաբերական գյուղատնտեսության մեջ արտադրողականության բարձրացման, ծախսերի կրճատման ու տարերային աղետներից պաշտպանվածության աստիճանի բարձրացման խնդիրները խթան են նաև գիտատար ճյուղերի բեռնվածքի ավելացման համար, քանի որ նմանատիպ խնդիրների հաղթահարումը պահանջում է նոր տեխնոլոգիական լուծումներ:

Մեր հետագա քննարկման համար Ձեզ կներկայացնենք մեր համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնում իրականացված հետազոտության արդյունքները, որոնք թվերի լեզվով կհիմնավորեն մեր կողմից քննարկման նպատակով առաջադրվող մոտեցումն առ այն, որ երկրի ներսում ներառական և կայուն տնտեսական աճի խթանման, զբաղվածության մեծացման, դիմակայուն ենթակառուցվածքների ձևավորման, ինչպես նաև ներառական և կայուն արդյունաբերության զարգացմանն աջակցելու

առավել արդյունավետ ուղիներից մեկը հենց մասշտաբային բնակարանաշինության ու արդյունաբերական գյուղատնտեսության խթանումն է:

ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ